ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

21.10.2024թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին

Գ.Ասրյանը - մարզպետի տեղակալ
Հ.Ավետիսյանը - մարզպետի տեղակալ
Ա.Սահակյանը - մարզպետի օգնական
Կ.Աշրաֆյանը - մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Ա.Բեջանյանը, Ռ.Պողոսյանը, Ռ.Մարգարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Է.Հախվերդյանը, Ա.Բաղդասարյանը, Ա.Բեջանյանը, Մ.Սարգսյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝
Ընթացիկ հարցեր

Ելույթ ունեցան՝

1. ՀՀ Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը ներկայացրեց անցած շաբաթվա ընթացքում անցկացված հանդիպումների և միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես ՀՀ առողջապահության նախարարի Լոռու մարզ կատարած այցի վերաբերյալ: Մարզպետը նաև իր նկատառումները ներկայացրեց գրիպի դեմ պատվաստման անհրաժեշտության, դրա վերաբերյալ տեղեկատվության ներկայացման և գործընթացի վերահսկման հարցերի նկատմամբ, տրված հանձնարարականների կատարման ուղղությամբ, մասնավորապես՝ մարզպետի տեղակալներին մինչև 21.10.2024թ. Աղետի գոտու հետ կապված դիմումների քննարկման և գործընթացի ավարտի հետ կապված, սուբվենցիոն և պետական ծրագրերի մշտադիտարկման, միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ճանապարհների պատշաճ սպասարկման և մաքրության պահպանման, ապօրինաշինությունների վերացման և այլ հարցերի վերաբերյալ:
2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանը և Հ.Ավետիսյանը ներկայացրեցին ըստ ոլորտների համակարգման իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես հայտնեցին, որ Աղետի գոտու բնակավայրերում տրանսպորտային միջոցների փոխհատուցման գործընթացը՝ թվով 165 անձի, գրեթե ամբողջությամբ ավարտվել է, ֆիզիկական անձանց բնակելի տների նորոգման գործընթացն իրականացվում է փուլերով, մասնավորապես Տաշիր համայնքում ընդունված 104 դիմումից 103-ին ընթացք է տրվել, 1 դիմում մերժվել է, Ալավերդի համայնքում ընդունված 132 դիմումից 88-ին ընթացք է տրվել, փոխհատուցվել են 69-ը, մնացած

դիմումները ընթացքի մեջ են: Գյուղատնտեսության ոլորտի փոխհատուցումները՝ թվով 274 շահառու, իրականացվելու են ըստ ներկայացված դիմումների ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված ընթացակարգով:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ա.Բեջանյանը ներկայացրեց վարչության կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես Աղետի գոտու բնակիչներին տրամադրվող փոխհատուցումների, երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին ԲԳՎ-ների հատկացման և փոխհատուցման, ինչպես նաև հանրակրթական դպրոցների ֆինանսական խնդիրների վերաբերյալ: Ներկայացվեց երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած և դատական կարգով իրենց իրավունքները վերականգնած քաղաքացիների բնակապահովման փոխհատուցումների հարցը, նշելով, որ թվով 37 ընտանիքներից 9-ի հետ կնքվել են պայմանագրեր և տրամադրվել բնակարանի գնման վկայականներ, իսկ 6 ընտանիքի տրամադրվել է միանվագ 3 միլիոն դրամի օժանդակություն:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանը ներկայացրեց տեղեկատվություն գրիպի կանխարգելման հետ կապված պատվաստումների ընթացքի, ինչպես նաև Առողջապահության նախարարի Լոռու մարզ կատարած այցի վերաբերյալ տեղեկատվություն:

5. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանը ներկայացրեց շինարարական աշխատանքների նկատմամբ վերահսկողության և մշտադիտարկման արդյունքների, մասնավորապես շաբաթվա ընթացքում վարչության կողմից տարբեր տարածաշրջաններում իրականացրած թվով 17 շրջայցերի, ինչպես նաև ապօրինաշինությունների, շինթույլտվությունների տրամադրման վերաբերյալ տեղեկատվություն:

6. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Մ.Խեչումյանը ներկայացրեց վարչության կողմից մարզի համայնքների հետ տարվող աշխատանքների, ինչպես նաև համայնքների ղեկավարների և ավագանու կողմից ընդունված ակտերի նկատմամբ վերահսկողության վերաբերյալ տեղեկատվություն, նաև առաջարկեց մարզխորհրդի նիստ հրավիրել սահմանված կարգին համապատասխան մինչև 31.10.2024թ.:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանին, Հ.Ավետիսյանին՝

Անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատճառված վնասների փոխհատուցման հետ կապված գործընթացն ավարտելու ուղղությամբ և 2-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանին, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին՝

2.1 1-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն մարզային ենթակայության դպրոցներում իրականացվող վերանորոգման, հիմնանորոգման վերաբերյալ, ինչպես նաև

ներկայացնել առաջարկություններ հետագայում դպրոցների կառուցման, վերանորոգման, հիմնանորոգման վերաբերյալ:

2.2 Ուսումնասիրել և 2-օրյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ Վանաձորի թիվ 15 հիմնական դպրոցի կառուցման, նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստման և տեղադիրքի ընտրության նպատակահարմարության հարցերի վերաբերյալ:

2.3 2-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն Վանաձոր քաղաքի Մոսկովյան 62 շենքի հարևանությամբ իրականացվող շինաշխատանքների վերաբերյալ Վանաձորի քաղաքապետարանի կողմից վարչական վարույթ հարուցելու և դրա ընթացքի վերաբերյալ:

2.4 Մարզի համայնքների ղեկավարների հետ կրկին անգամ քննարկել և ներկայացնել Վարչապետի այցի հետ կապված այցելության օբյեկտների ցանկը՝ հնարավորինս ներառելով նաև այլ՝ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներ և օբյեկտներ:

2.5 Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել միջպետական, մարզային և համայնքային ճանապարհների պատշաճ սպասարկման և մաքության պահպանման նկատմամբ, ինչպես նաև ճանապարհամերձ տարածքներում ապօրինի կառույցների, ժամանակավոր տնակների, առևտրի կետերի և այլ անօրինական օբյեկտների ապամոնտաժման նկատմամբ, հատուկ ուշադրություն դարձնել քաղաքի մուտքերի և առևտրական կազմակերպությունների կողմից սահմանված կարգին համապատասխան գործունեություն իրականացնելու նկատմամբ և կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն մինչև 30.10.2024թ.:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանին՝

3.1 Անհրաժեշտ բացատրական աշխատանքներ տանել բնակչության շրջանում, ինչպես նաև պետական հիմնարկներում՝ գրիպի համաճարակի և դրա դեմ պատվաստումների անհրաժեշտության վերաբերյալ:

3.2 Ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ մարզային ենթակայության պոլիկլինիկաների և բուժամբուլատորիաների հիմնանորոգման և անհրաժեշտ սարքավորումներով համալրումների վերաբերյալ:

X

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99